



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ԹԻՒ 70

ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

## Ա.ՏԵՂՄԱՆԻԹԻՒՆ

Ա.Զ.Պ.Ա.ՅՈՒՆ

ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ.ԱՅ

ԲԱՑՈՒՄ 1870 ԱՄՒՆ

ԵԱՀԱՅ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ

10 ապրիլ 1874



## ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՑ

ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ Յ. ՄԻԼԴԵՎԱՆԻ

1874

ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԵՆԻԱ

ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԵՆԻԱ

ՀԱՅՈՒԹՅՈՒՆ 1870 ԿԵՐՆ

ՆԻՍՏ Հ.

49 ԱՎՐԻԼ 1874

ՆԱԽԱԳԱՀ · — ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ՆԵՐՍԼՍ ՍՐԲՈՂԱՆ  
ԱՏԵՆԱՊԵՏ · — ԱԴՐԵՆԵԱՆ Ս · ԷՖ · (Գ · Ատենապետ)

## ԿԱՐԴ ԽՆԴՐԱՅ

1. Վաւերացում նախորդ Ատենաղրութեանց :
2. Վաւերացում նորընտիր Երեսփոխանաց :
3. Ընտրութիւն Դիւանի Անգհանուր ժողովոյ :
4. Շարունակութիւն խնդրոյ Պատրիարքական ընտրութեան :
5. Ազգային Սահմանադրութեան փոփոխեալ տրամադրութիւնք :
6. Կրօնական եւ Քաղաքական ժողովոյ պակսած անդամոց ընտրութիւն :
7. Աղթամարայ Կաթողիկոսական խնդիր :

Ժամը 8 ին Ատենը բացուեցաւ երբ ժողովոյ մեծամասնութիւնը դեռ դոյացած չէր : և 51 երեսփոխան միայն ներկայ էին . սակայն ոչ անագան այս թիւը բազմանալով մեծամասնութիւնը դոյացաւ և ներկայութեան վերջին թիւը 58 ի յանգեցաւ :

մէջ եղած վիճարանութիւնը յաջորդին մէջ շարունակելու է թէ ոչ , որոշում չտրուած ատենանին գոցուիլը : Ասոնք յիշելով նորատակը զայն հասկըցնել է թէ ըստ որում դիւանին օրինական պայմանաժամը լրանալու վրայ է , պէտք է որ դիւանը նորոգուելով հանդերձ իւր ատենական կանոնն ալ ունենայ : Երերորդ : ուրիշ կէտ մ'ալ կայ նկատողութեան արժանի . ժողովուրդն՝ որոյ թոյլտուութիւն եղած է հօս իրբե ունկնդիր Ներկայ գտնուելու : Երբեմն իւր սահմանէն կանցնի , ատենարանից խօսքն ընդմիջելով անտեղի ցոյցեր կընէ , և երբեմն ալ կը ծափահարէ . այսպիսի ցոյցերով պոռալ և գոշել ժողովին ներդաշնակութիւնը կը խսնդարեն և երեսփոխանաց խօսքերուն ցիոթութեան առիթ կուտան , ուստի ունկնդիր ժողովուրդը եթէ վերստին

ԱՏԵՆԱՊԵՏ Էֆ · — Նախ դիւանին կողմէ պարտաւորութիւն կը համարիմ յոյտ սունել թէ ժողովը դժբաղդարար իւր Ատենական կանոնէն զորի դանուելուն համար զանազան թերութեանց տակ կընկնի . ինչպէս է իւր առջի նստին ատենադրութեան հետեւալ նըստին զվաւերացուիլը . նոյնպէս իւր դիւանին անդամներէն Ա . և Բ . Ատենապետներն երբ հրաժարած են , անոնց տեղ անմ/ջապէս բնարութիւն չըլլալը . նաև նախընթաց նիստի մը

անտեղի ցոյցեր , և ծավառարութիւններ ը-  
նէ , և իւր մէջէն արուացող կամ խօսող զբա-  
նուին , իբրև Առևենապես այխոի առաջարկեամ  
Փաղուին որ նիստը դանփակ ըլլոյ :

Այսպէս ընելու իրաւունք պիտի ունենամ, որպէսզի ժողովը կարենայ անփրդով իւր գործերը կարգադրել: Ըսի թէ դիւանին պարագն էր ամեն բանէ առաջ նախորդ առենագրութիւնները ժողովն վաւերացման դընել. այս պարագը զանց եղած է քանի մը նիստերէ ի վեր. Էը յիշէք որ անդամ մը Տեղասրահի ընտրութեան ստիպողականութիւնը ներկայացուելով, ըսուեցաւ թէ նախորդ առենագրութեանց վաւերացման խնդրով կառող չենք ժամավաճառ ըլլալ, և այսպէս մընաց. յետոյ Քաղաքական ժողովը ընտրութեան նիստը յաջօրդեց, դարձեալ նախորդ առենագրութեանց վաւերացումը մնաց և Նախընթաց նիստն ալ որուն ներկայ չէի, նոյն վիճակին հանդիսեր է, և դիտողութիւններ եղեր են դիւանին դէմ, իրաւ թէ թերի գտնուած է իւր պաշտօնին մէջ: Սակայն ինչ-

ալիս արդէն ըսի , այս պակասութիւնք Առենական կանոնաց չգոյութեան հետևանքն ըլլալով , ոլէտք չէ վերազրել ոչ դիւանին և ոչ որ և է մէկուն , և ասոնց դարմանը դարձեալ Առենական կանոնաց հասաւատութենէն սպասել ոլէտք է : Ահա՝ այսօր ալ խնդիր մը կուգայ ժողովին , որ կը պարտաւորէ դարձեալ ետ թողուլ նախորդ առենազրութեանց վաւերացումը , և այս խնդիրն է Պատրիարքական ընտրութիւնը , զոր ազդային Վարչութիւնն իրր ընդհանուր ժողովոյ նախընթաց նիստէն վիճաբանութեան դրուած խնդրոյ մը շարունակութիւնը կը բերէ մեզ , և կսովորէ որ ժամ առաջ Պատրիարքն ընտրենք . վասն զի կարող չեմ , կըսէ , առանց Պատրիարքի դորձել : Ուստի Դիւանը Վարչութեան այս առաջարկութեան ստիպողականութիւնն ՚ի նըսկատի առնուու և Առողման Առենական հանուն

զստր առողջով և ժողովրդ Առաքական զառուս,  
զուրկ գտնութիւն ալ իւր աշաց տոջե բերելով,  
պարտաւորութեան մէջ կը դանէ զինքն այս  
խնդրոյն ձեռնարկել, և ետ թողուլ դարձեալ  
նախորդ վեց նիստերու ատենադրութեանց  
վաւերացումը, թէև այդ ատենադրութեանց  
ամենն ալ հրատարակուած և երեսիտանաց  
ըրուած ըլլալով դիտողութեան դրուելու  
պատրաստ վիճակի մէջ են:

բել. ո՞չ ասլաքէն ընտրեալն, ալ կրնայ ըսել  
թէ զիս ընտրողն իւր պարաքը կը կատա՞րէ  
կոր. ուստի ըսախո շատ իրեակն բան մը կը-  
լայ այդ երդումը, վասն որոյ ես ալ կը ձայ-  
նակցիմ անոնց՝ որ այդ երդման խնդիրն ետ  
մնայ կըսեն : — Խակ Սահմանադրութեան վե-  
րաքննութեան խնդրոյն գալով, ըստ որում  
Ընդհանուր ժողովոյ կողմէն վերջին անդամ  
կարգուած վերաքննիչ յանձնաժողովն բաւա-  
կան աշխատելով այս մասին, իւր աշխատու-  
թեան արդիւնքը տեղեկագրով մը բերած է,  
ուստի Պատրիարքական ընտրութեան գործը  
կատարելէ ետե կրնանք զայն ալ նկատողու-  
թեան առնուլ :

Հատ լաւ կը յիշեք որ ասկէ և տարի առաջ Յանձնաժողով մը ընտրեցիք Աղհմանադրութեան վերաբննութիւնը կատարելով ծրագիր մը բերելու համար , յիշեալ Յանձնաժողովին ես ալ անդամակից ընտրուած էի , ի՞նչ եղաւ մեր ութ ամիս աշխատութեան արդիւնքը , ոչ ինչ : Վասն զի մեծ և ստուար ծրագիր մը ներկայացուցինք պատկառելի Փողովոյդ , զրեթէ նորէն աղդային Աահմանադրութիւն մը հեղինակած էինք , նորանոր դրութեամբ , որն որ անդորժադրելի համարուելով , ծրագիրը մերժուեցաւ և արդի Աահմանադրութեան վրայ յօդուած առ յօդուած յատենի Ընդհանուր ժողովոյ կարգալով վերաբննութիւն ընելու որոշումն եղաւ , շատ մը ժամանակ ալ այնպէս աշխատեցանք և դարձեալ գործը անկատար մնաց : Եթէ նորէն առջի ծրագրին որևէ օրէնք մը ներկայացնենք Բ . Դրան , ո՞ գիտէ քանի տարիէն պիտի կարողանանք որատասխանն առնուլ : Ի՞նչ հարկ այնչափ փոփոխութիւններ ընելու , ունինք արդէն Աահմանադրութիւն մը վաւերացեալ Տէրութենէն , ես կարծեմ թէ վերջին Յանձնաժողովոյն ըրած մասնաւոր փոփոխութիւններով գործերնիս կը լմնայ , այդ փոփոխութիւնները միայն բաւական համարինք և շուտով Վարչութեան ձեռօք Դրան ներկայացնենք ոչ թէ իրու նոր օրէնք , այլ արդէն ունեցածնիս վերաբննեալ , վասն զի 99 յօդուածէ բաղկացեալ Աահմանադրութեան մը 10 կամ 20 յօդուածը փոփոխելը մեծ քան մը շերենար և վաւերացումը շատ կը դիւրանայ , իսկ թէ որ այս ըստ ճամբովս չքալենք ու բոլորովին փո-



տարուած ընտրութեանց օրինաւորութիւնը  
կը հաստատեմ կըսէ իւր տեղեկագրին մէջ :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՅ. — Թէև թերութիւն կայ տեղեկադրին մէջ, ինչպէս իփէկ-մեան էֆ. յառաջ բերաւ. սակայն ըստ իս այդ թերութիւնն ընտրութեանց վաւերացումն այսօր ետ ձգելու չափ զօրութիւն չունի. ուստի վաւերացումը կրնանք կատարել, ուրիշ անդամ այդ կէտին ուշադրութիւն ըլլալու պայմանաւ :

ԻՒԹԻՒՃԵԱՆ Կ. ԷՅ. — Քանի որ Քաղաքական ժողովն ընտրութեանց օրինաւորութիւնն ստուգելով բերած է իւր տեղեկադիրը կառաջարկեմ որ վաւերացումն այսօր րլլայ. իսկ ապագային մէջ ընդհանուր ժողովոյ որոշման համեմատ դարձեալ նշանակուին թէ՝ ընտրողաց և թէ՝ քուէից թիւերն :

մեր անոնց կատարելութիւնները չունենալով հանգերձ կուզենք որ Զ ժամուան մէջ մեծամեծ գործեր կատարենք : Խօնչ ըրած է ժողովուրդը . եթէ ծափահարութիւն կամ անպատիւ ցոյց մը ըրաւ ըսնն , ես պիտի ըսեմ թէ դտնուեցան խոհական մարդիկ ալ որ յուզեալ ժողովուրդը լռեցուցին : Ամեն ազգաց մէջ

Ուրիշ դիտողութիւն ընտղ չըլլալով , դիւ-  
տանը քուէի կը դնէ Երեսփոխանական ընտ-  
րութեանց տեղեկագիրը , և ժողովն ընդհա-  
նուր հաւանութեամբ կընդունի և կը հաստա-  
տէ կատարուած ընտրութիւնները :

## ԵՐԻՒՆԱԿՈՒԹԻՒՆ ԽՆԴՐՈՑ ՊԱՏՐԻԱՐքՈՎԱՆ ԲՆՏՐՈՒԹԵԱՆ :

ԻՓԵԿԱՑՄԱՆ Հ. ԷՖ. — Շատ անդամ մարդ  
առարկութիւններ ընելու դիտաւրութիւն  
ալ եթէ չունենայ, սակայն երբ այնպիսի ա-  
ռաջարկութիւններ կրլան՝ որոնց ինքը համա-  
միտ չէ, իւր ոլարտքն է դիտողութիւն ընել:  
Առենալետ է վ. ըստ թէ ժողովուրդն իւր  
ներկայութեամբ անհանդիս կընէ Երեսփո-  
խանական ժողովը: Այդպիսի խօսքեր շատ  
անդամ ըստեցան հոս: իմ ըսելքու զրուցելէ

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. ԵՖ. — Ես ծայրահորութիւն  
ընդունելու համար չխօսեցայ . իմ պարտքս է  
պաշտպանել ժողովուրդն երբ արդարութիւն  
և իրաւունք իւր կողմն են . այն ստեն ես ալ  
անոնց կողմն եմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Ըստ արդին որ ժողովուրդը պէտք չէ միջամտէ երեսիօխանաց խօսքերուն . թէ որ կրկնուին այդ շաբժումները և նորէն ցոյցեր կամ ծափահարութիւններ

1108

ինքն դիւանը կը պարտաւորի Ատեանը գու-  
յել, և ոլաւասթանաւու կը լլայ այն անձը՝ որ  
որ հաճոյքը զոհ ընելու համար ձեռք ձեռքի  
ը զարնէ : Ժողովուրդը այս տեղ ոլարզագիւ-  
անինդիր մըն է, եթէ ընդհանուրի վերա-  
երեալ խնդիր մը ունի, կրնայ հանրագիր մը  
հասուցանել : Դիւանը գարձեալ կը յայտարա-  
տէ, թէ որ կրկնուին միենոյն ցոյցերը և ժո-  
ղովին ներդաշնակութիւնը խանդարի, Ատ-  
անը դոցելու ոլիուի ոլարտաւորիմ :

Պէսեան թ. էֆ. — Կը բողոքեմ Ատենա.  
ան էֆ. ին այն խօսքերուն գէմ, որոնք ժո-  
ղուրդը դրդուելու պատճառ. կըլլան և առիթ-  
ուան անոր երեսփոխանաց աղատ վճարա-  
ութեանը վայ ձնչում բանեցնելու : Սակայն  
նշում բանեցնոլները մէկ քանի հօգի են միայն,  
մէկ քանին ժաղովուրդ չնշանակիլը . ուստի  
ողաշեմ, Ատենապիտ էֆ. որ այդ մէկ քա-  
ին անկարդութիւնը ժողովրդեան չվերադ-  
րը :

Այս միջոցին ժողովողեան մէջէն մէկը  
ուալով աշխարհը կը նորսգի, և Ատենապետ  
ի. կը սլարտաւորի նոյն սլոռացող անձը  
ըստ հանել տալ:

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Մահիկ ըրէ՛ք,  
բելի ժողովուրդ . մէք Ասհմանադրութիւն  
ունինք , զոր Օգոստավիստ . կայսրը չնորհեր  
մեր բաղձանքը պատկելու համար : Աակայն  
ացէ՛ք որ մէք այսօրուան օրս միապետական  
րութեան մը ներքեւ կը գտնուինք , հոս նե-  
փ չկրնար ըլլալ այսպէսի ցոյցեր ընել ա-  
տ երկիրներու մէջ եղածին նման . եթէ ո՞չ  
Ասհմանադրութիւնը կերթայ ձեռքերնուա-  
տի կաղաչեմ որ օրինաւորութիւնը յարգէք  
ասանկ ցոյցեր ընէք :

ԵՌԻՍՈՒԹԵԱՆ Տ. ԷՅ. — Արրաջան Հայր .  
թէ ազատ երկիրներու մէջ եղածը հոս  
ար . մեք շատ տեղ պարտած ենք , ասանկ  
տօնութիւն մը զոր մեր երեսիոխանութիւ-  
տուած է ժողովրդեան , և ոչ մէկ երկրի  
մէջ կայ . ուրիշ տեղեր երեսիոխանք տր-  
ութիւն ունին հաւանած ատենաբանու-  
ւննին ծախահարելու , և նոյն միջոցին հան-  
ատես ժողովրդեան կողմանէ եղած մաս-  
ցութիւնը որ և իցէ շփոթութեան մը տեղի

Հի տալուն պատճառաւ թոյլտուութիւն կը լլայ ։  
Խակ մեր ժողովին մէջ քանի որ երեսիոխանու-  
թիւնը ծափահարելու սովորութիւն չունի ,  
ունինդիր ժողովրդեան կողմանէ Եղած ցցցերը  
հաւանութիւն ըլլան թէ դժկամակութիւն ,  
առեանին անդորրութիւնը կը վրդովեն . ահա  
ոյս պատճառաւ արգիլուած է :

ԽՕՃԱՍՍՐԵԱՆ Օ. Էֆ. — Բացատրեցէք նաև  
Ե՞ նոյն երկիրներու երեսիուսանութեան  
որահներուն մէջ ի՞նչպէս կընդունուի հանդի-  
ատես ժողովուրդը :

ԱԼԱՃԱՋԵԱՆ Հ. Էֆ. — Կաղաքէմ, Ժի՛ Էրարթէջ միջանկեալ խօսքելը :

Պէսեան Թ. Էֆ. — Անկարգութիւն ըստները դուրս ելնեն ըսինք :

ԱՏԵՆԱՊԵՏ էֆ . — Այն անձն՝ որ աղմուկ  
արոյց, արդէն իւր ընկերաց ձեռօք դուրս  
անուած է :

ԻՓԵԿՃԵԱՆ Հ. ԷՅ. — Կարծուեցաւ թէ  
ո ըսի որ ծափահարեն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ . — Դուք , իմ կանոնական  
վահանականությունս կաշկանդեցիք , և  
յս սլատմառաւ ազմուի երաւ :

թիւնը՝ զոր յիշեցիք . կը տեսնէք որ մեզի վերաբերութիւն չունի այդ խնդիրը : — Ըստք նաև թէ վերաքննութիւնն եթէ հիմնական ըլլայ և երկար ծրագիր մը մատուցուի Բ . Դըրան , երկայն ատեն կը մնայ հոն և չլաւ երացուիր . ասկէ կը հետեւի որ թերի և վեր ՚ի վերոյ վերաքննութիւն ընելու է . բայց չարիքէ մը աղատ մնալու համար մեծագոյն շորիք մը ընտրելը չեմ կրնար իմաստութիւն և խոհեմութիւն համարել : — Դարձեալ , ըստք նաև թէ նոր խնդիր մըն ալ մենք չըյարուցանեմք . այս մասին ալ անհամամիտ եմ ձեզ . մեզ նման հաւատարիմ և օգտակար ազգի մը անդորրութիւնն ու յառաջադիմութիւնը կարծեմ մեծ խնդիր է տէրութեան համար , և չեմ կարծեր որ տէրութիւնն ալ տարբեր կերպով խորհի այս մասին : — Գալով խնդրոց կարգին , Վար-

կութիւն կընէ Պատրիարքի ընտրութիւնը նախադասել . բայց Վարչութիւնը կարող չէ խնդրոց կարգը բռնաբարել , և իւր ուղածը յառաջ քշել : Ըստ իս Պատրիարքական ընտրութեան այսչափ կարեւորութիւն տալն ալ աւելորդ է : Վարչութիւնը կրօնական և Քաղաքական ժողովոց պակաած անդամոց ընտրութիւնն ալ առաջարկած է . ըստ իս այս ալ աւելորդ է . ըստ որում յառաջակայ մայիս 4/ն՝ որ սահմանադրական տարեգլուխ է , ամբողջասլէս պիտի նորոգուին . ուստի աւելի լաւ կընէ որ աղդասիրութեամբ շարունակէ իւր պաշտօնը առժամանակեաց Տեղապահով մինչև օրինական մերձակայ պայմանագամը լրանոց : — Ահա առոնք են իմ դիտողութիւններս զրոյացնեցի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ . — ԵՐՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՎՐ ՀՐԱՎԵՐ Ի՛Ր ԳՐԿՈՒՅ : ԽՆԴՐՈց Կարդն ալ մէկտեղ է , տարակոյս չիայ թէ այն երեսփոխանը՝ որ վիճաբանութեան պիտի մասնակցի , նախապատրաստուած կուդայ հոս : Ես ալ իրեւ երեսփոխան իմ կործ իքներս յայտնեցի , և Ընդհ ժողովոյ վիճաբանութեան և որոշման ենթարկեցի : Սուկոյն Խիմ կմեան էֆ . առանց նախապատրաստութիւն ունենալու և Պատրիարքի ընտրութեան խնդրոյն վրայ կործիք յարտնելու ։ միմիոյն իմ խօսքերէս նիւթ կը փնտէ և իմ ըստծներս իւր ուզածին պէս

Բ. Դրան ներկայացնել . վասն զի Փողովոյ Առենական կանոնաց կը վերաբերին և Սահմանադրութեան այս կամ այն յօդուածին հետ վերաբերութիւն չունին . իսկ Զ. մասին մէ մասնաւոր հրաւիրագիր դրկուիլը չէ թէ բարձուած է . այլ յաւելուած պիտի ըլլայ լրագոաց միջոցաւ ևս հրաւիր ընելը : Ես ալ բոլոր առենադրութիւններն աշքէ անցընելով և Սահմանադրութեան հետ բաղդատելով, Սահմանադրութեան արդէն սրբագրեալ մասանց հաւաքածոյ մը պատրաստած եմ, որ ահաւասիլ կը կարդայ հետեւալը) .

1. Սահմանադրութեան 63 րդ յօդուա-  
ռյն սա պարբերութիւնը՝ թէ եկեղեցական  
քրեափոխանաց համար Յ տարի առաջ ձեռնադ-  
ուած ըլլալու պայման դրած է, երեսփոխա-  
ական վերակազմութեան միջոցին Գործադիր  
անձնաժողովոյ տեղեկադրին վրայ Ընդհանուր  
ողովոյ հաւանութեամբը բարձուած է. Նիստ  
• 21 օգոստոս 1870 :

2 . Ասհմանադրութեան 59 րդ . յօդուածը  
և ընդ նմին ատեան բանալու համար սահ-  
անուած այլ յօդուածոց տրամադրութիւնը  
ոխուած է այսպէս . « պաշտօնի մէջ դժնը-  
ող անդամոց մնեադոյն մասին ներկայութիւնը  
նստել » . Նիստ Բ . 28 օգոստոս 1870 եւ  
երահաստանեալ ի նիստ Ժ . 6 նոյ . 1870 .

3 . Ասհմանադրութեան 86 րդ . յօդուածը  
ամաղբուած է ոյսպէս . որոշեալ թամուն  
ենան բանալ առանց մեծագոյն մասի սպա-  
լու . բայց որոշման ը համար մեծագոյն մա-  
սպասել . Ն սա Ժ . 6 նոյ . 1870 :

կ . Սահմանադրութեան 89 րդ . յօդուա-  
ն վրայ յաւելեալ է նաև «առանց մասնաւոր  
աւիրապիրներ ղրկելու ալ , լրագրաց միջո-  
ւ երեսփոխանաց իանխաւ ծանուցանել ժո-  
վին զումարումը » . Նիստ ՃԶ . 15 յունվար  
71 :

5. Աահմանսդրութեան 36 բդ. յօդուա-  
ն Քաղաքական ժաղովոյ թիւը փոխանակ  
ի 44 որոշուած է. Նիստ 12. 46 յունիս  
72:

6. Ասհմանալրութեան 37 ըդ. յօդուա-  
ս մէջ Քաղաքական ժողովոյ ընտրութիւնը  
դհանուր ժողովոյ մէջ կատարելու առենն,  
ո շահել կատարել որոշաւած է . Նիստ ԽԶ .  
յունիս 1872 :

7. Սահմանադրութեան 99 բդ. յօդուա-  
ծին վերաբնիչ յանձնաժողովոյ անդամոց 20  
թիւը 12 ի զեղչուած է. Նիստ ԵԶ. 26 յուն-  
վար 1873 :

ԽՕՃԱՍՍԱՐԵԱՆ Օ. ԷՅ. — Առենապետ է գր.  
Պատրիարքի ընտրութեան սահմալողականութիւն-  
նը քաղաքական նշանակութեամբ ալ առաջու-  
ցանելու համար մենք զատուած հասարակու-  
թեան մը եղած առաջարկութեան օրինակը յի-  
շեցուց եւ կասկած յայտնեց թէ չլլայ որ մե-  
զի ալ տարածի այդ բանը . բայց մեր ալոց մա-

խը չունինք չէ թէ անոր համար որ գօրաւոր ևնք  
մեր Սահմանադրութեամբը . այլ անոր համար որ  
Գէորգ Կաթուղիկոսի ընտրութեան առեն ինչ  
սկզբան դէմ որ բողոքեցինք , այն է Ռուսիոյ  
կայսեր երեք ընտրելն ցուցուելուն դէմ , նոյն  
սկզբունքն է որ տարածել կուզուի Յամանեան  
կառավարութեան ձեռամբ մեղնէ բաժանեալ  
մէկ մասին վրայ - բայց այդ դրութիւնը տաճ-  
կաստանի մէջ հիմ չկրնար գանել : Նոյնպէս  
Պատրիարքի ընտրութեան ստիպողականութիւ-  
նը յառաջ վարելու համար Ատենապետ էֆ .  
յայտնեց թէ Պատրիարքին ուխտելու ինդիքը  
կարեւորութիւն չունի , ես կըսեմ թէ շատ կա-  
րեւորութիւն ունի :

Ասկէ ետքը կուգայ Խմէկճեան էֆ . ի ը-  
սած կէտը Կրօնական եւ Քաղաքական ժողովոց  
պակսած անդամոց լնտրութեան առթիւ , ա-  
նոնց պայմանաժամը մինչեւ մայիս 1 երկարա-  
ձգել առաջարկելով : Այնպիսի վիճակի մէջ  
ենք որ աշխատողաց կարօտութիւն կայ . երբ  
ելլենք ըսենք թէ ձեր պաշտօնը մինչեւ մայիս  
է , առ ահնական մեկնա ու ուի առն հայու

էր, բայց եթէ հրաժարեցէք ըսել է, որով եւ անոնց արժմունիքը վիրաւորել է. ուստի ինձի մայ նէ դիւանը այդ ակնարկութիւնը կամ ոսուքը հերքելու է որ անոնք ալ շարունակեն: Արջութիւնը Պատրիարքի ընարութեան ստիպողականութիւնը առաջարկելուն հետ ամեւ ամեւծ ծառայութիւն մ'ալ կընէ խոստանալով ահմանադրութեան արդէն Ընդհանուր ժողով ձեռօք փոփոխուած տրամադրութիւնքը ունէն վաւերացնել տալ. ի՞նչ կուզենք ասկէ ուելի որ այն պակասը՝ զոր մեք մինչեւ հիմա լարտաւոր էինք լեցնել եւ շըրինք, Վարչութիւնը կը լրացնէ. մանաւանդ որ ընարուելիք

Պատրիարքէն Սահմանադրութեան վրայ ուխտ  
պիտի պահանջուի . հիմա ամենէն աւելի ժա-  
մանակն է որ այդ վաեւ ացումը կատարուի :  
Աւստի կառաջարկում որ այս կէտը քուէի զբր-  
ուի լմնայ : Աւխոը աւելորդ է եւ երդման  
պէտք չկայ ըստեցաւ , ասի մեզ շատ հեռու-  
ները կը տանի . Խրիմնեան սրբազնին ատենն  
անգամ առանց ուխտի չթողոցինք . միտյն  
տառի եւ ոգոյ խնդիր կար , հիմա չկայ :  
Չուխտել կը նշանակէ ճէլու ուրիշ հոեւնէ : ինչ-  
պէս ուրիշներ փախան : Խակ գալով այս կէտին  
որ մէջ բերաւեցաւ թէ ինչո՞ւ ծողովն ալ միտ-  
աեղ նոյն ուխոը չընէ , կը պատասխանեմ թէ  
ծողովն ալ արդէն Պատրիարքին հետ կուխտէ :  
Պօռս Պատոհառոի պահակաւութեան միջոցին

աղեկ բացառուեցաւ այս կէտը նոյն ժամանակի Ընդհանուր ժողովոյ Ասենապետ Սէրվի-  
ջէն էֆ. ի կողմէն : Նա ըստ թէ երբ ժողովին դուխը կուխտէ Ժողովն ալ հետ է . եւ  
սաոյդ է այս . երբ նա իր վեղարն ու մեք զը-  
խարկնիս կը բանանք և կեղեցոյ մէջ , մեք ալ  
նա ալ 'ի միասին ուխտած կը լլանք : Ուստի  
կառաջարկեմ որ Վարչութեան առաջարկու-  
թիւնն ամբողջապէս քուէի դրուի և անմի-  
ջապէս ձեռնարկուի Պատրիարքական ընտրու-  
թեան :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Յղուէն էֆ. երդման  
մասին իմ խօսքու սխալ հասկցած ըլլալուն  
պէտք է ուղղեմ իւր թիւրիմացութրւնը : Ես  
չըսի թէ Պատրիարքը բնաւ չուխտէ . այլ Քա-  
ղաքական ժողովոյ առաջարկած երդման նոր  
ձեւն աւելորդ է եւ ըստ իմ կարծեաց ըն-  
դունելի չէ բար:

Պէսէսն թ. էֆ. — Եթէ Ժողովոյս մէջ  
արտասանուած ամենն խօսքերուն պատասխան  
որուի, վիճարանութիւնն անվիրջանալի կրլ-  
լայ. ուստի բուն խնդրոյն վրայ պիտի խօսիմ  
որուն լուծումն արդէն մօտ է: Օգուչն էֆ.  
կարծիք յայտնեց որ Վարչութեան բերած տ-  
ռաջարկութիւնը քուէի զրուի եւ երբ ըն-  
դունուի, այն ատեն ընտրութեան ձեռնակուի:  
Ես ալ համակարծիք եմ իրեն. ես չեմ կարծեր  
որ Վարչութեան առաջարկութեան ստիպողա-  
կանութիւնը չճանչող մէկ երեսփոխան մ'ալ  
կարենայ գտնուիլ. եթէ գտնուի ալ, այն իսկ  
խղճի մոօք դիտէ թէ Պատրիարքի ընտրութիւ-

նը կարեւոր է : Թէ եւ ինձ ալ փախաքելի էր  
որ ամբողջ Ասհմանազրութեան վերաբնօւ-  
թիւնն աւարտելով աւելի ձեւաւոր ուխտ մը  
կատարուէր , սակայն Ազդային Վարչու-  
թիւնը նախարդ նստին յայտարարած չուլալով  
Ասհմանազրութեան փոխուսեալ մասմաց վա-  
ւերացումը Բ. Դրան առաջարկել . այն առեն  
անպատճենութիւն նշարուեցաւ . այսօր վեր-  
ցած է այդ . ըստ որում Վարչութիւնը դրով  
կը խոստանայ քիչ օրուան մէջ այդ վաւերա-  
ցումը ձեռք բերել : Աւսուի կը ձայնակցիմ Օգ-  
սէն էֆ. ի առաջարկութեան թէ անմիջապէս  
քուէի զրուի Վարչութեան բերած խզիբը .  
եւ եթէ ընդունուի անմիջապէս Պատրիարքի  
ընարութեան ձեռնարկուի :

ԴԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅ. — Կը մայնակցիմ  
վարչութեան խնդիրն անմ ջապէս քուէի զըր-  
ուելու համար եղած առաջակութեան :

Տ. ԱՄԲՐՈՍԻՈՆ ՎԱՐԴ. ԽՍԿԵՆՏԵՐԵԱՆ. —  
Արովինեաւ միայն խօսքով ողբացող չեմ երես-  
վոլսանական ժողովոյ թանկարին ժամերուն  
կորսունան վրայ . ուստի ինչպէս որ ֆափաղ-  
եան , Պէկեան եւ Օդոէն է ֆէնտիները յայտ-  
նեցին , ևս ալ կը ձայնակցիմ անոնց եւ կառա-  
ջարկեմ որ եղած վիճարսնութիւնը բաւական  
համարուելով խնդիրն անմիջապէս քուէի դրուի  
որոշուի : Նախորդ նիստին ալ քուէարկուելու

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. (ՀՆԴԻ ՔՐԵԼՈՒ) — Կազմակեր, անձնականութեանց վրայ մի՛ խօսիք :

Տ. ՄԱՏԹԵՈՍ ՎԱՐԴ. ԽԶՄԻՒՐԼԵԱՆ. — Խչ-  
պէս որ անցեալ նստին մէջ խօսեցայ թէ նախ  
վերաքննութիւն եւ ապա Պատրիարքի ընտրու-  
թիւն, այսօր դարձեալ նոյնը պիտի ըսէի եթէ  
Այդային Վարչութիւնը Սահմանադրութեան  
արդէն Ըստհանուր ժողովով վերաքննուած կէ-  
տերը Բ. Դրան վաւերացնել տալու խոստումը  
ըրած ՀԸՀԱՐ յատենի Փողովոյս : Սակայն քանի  
որ այդ խոստումն եղաւ այսօր, ուստի կըսեմ  
որ Վարչութեան առաջարկութիւնը քուէի  
գրուի : — Աւստի խնդրոյն գալով, առանց  
նոյն վերաքննեալ յօդուածոց վաւերայումը  
ձեռք բերելու թէ որ ընտրելի Պատրիարքն  
ուստէ, դարձեալ անոյոշ վիճակ մը պիտի  
ունենայ նորոնտիր Պատրիարքը, ուստի ընտ-

բութեան ստիպողականութեան մասին ձայնութ-  
ցելուս հետ սա ալ կըսեմ որ որչափ կարելի է  
զերաքննեալ յօդուածոց վաւերացումը շուտով  
դայ . եթէ Պատրիարքի ընտրութեան վաւերա-  
ցումէն առաջ ալ չկրնայ գալ , գո՞նէ անոր  
հետ մէկտեղ դայ . որպէս զի նորշնտիր Պատ-  
րիարքն իւր ուխտովը հակասութեան մէջ չը  
գտնուի :

ԽԹԵԿԱՃԱՅՆ Հ. ԷՅ. — Վարչութեան բերած իմոդրոց կարգին մէջ կրօնական եւ Քաղաքական ժողովոյ պակսած անդամոց ընտրութեան մասին դիտողութիւն ըրած էի թէ, այդ ընտրութեան պէտք չկայ այժմ, քանի որ ողայմանաժամանքին կը լրանայ յառաջիկայ մայիսին եւ այն ատեն ամբողջապէս պիտի նորոգուին : Ասոր դէմ Օգոէն եւ Փափազեան էֆենս ինեւը առարկութիւններ բերին եւ հետեւցուցին թէ Քաղաքական ժողովոյ պաշտօնավարութիւնն ըստ Սահմանադրութեան լրացած չհամարուիր եւ թէ նա խոր պաշտօնը շարունակելու է : Չեմ գիտեր Սահմանադրութեան մէջ այնպիսի ոռուած մը ուսարու պար սա ուսեմ ու ե

բենց խօսքովը կուզեն հասկըցնել թէ չպիտի  
գործադրենք Սահմանադրութիւնն երբ մեր  
բանին չդայ եւ պիտի գործադրենք՝ երբ մեր  
բանին դայ։ Չեմ ուզեր անդատասխանի թո-  
ղուլ Օգսէն էֆ ի այն խօսքն ալ թէ Քաղաքական  
ժողովը անձնուիրութեամբ կը դործէ։ Որչափ  
դուք, Օգսէն էֆ. նոյնչափ ալ ես կը ճանչնամ  
Քաղաքական ժողովոյ անդամոց անձնուիրու-  
թիւնն ու արժանիքը։ բայց քանի որ Սահմա-  
նադրապէս պայմանաժամնին կը լրանայ, իրենք  
ալ յանձն չեն առներ շարունակելու։ կուշեմ  
հաւատալ որ այս այսպէս է, բայց դուք, Օգսէն  
էֆ. որ ջերմ սահմանադրական էք, ի՞նչպէս  
կուզէք Սահմանադրութեան մէկ յօդուածը զո-  
հել այս կամ այն հանդամանաց։ ես այդ շեմ  
կրնար ընդունիլ։ Շնորհակալ պէտք է լինինք  
անձնուիրութեանց համար, սակայն ներելի չէ  
օրէնքը զոհել անձնուիրութեան եւ ուրիշ որ  
եւ է հանդամանաց։ եւ միթէ այն անձնինքը  
չպիտի կրնան նորէն ընտրուիլ քանի որ իրենց  
արժանիքը ծանուցեալ է, եւ քանի որ վերընտ-  
րելի կրնան ըլլալ իրենց արժանիքը վիրաւորե-  
լու բան մը չկայ։ — Վերաքննութեան վրայօք  
եղած խօսքերուն գալով, կը աեսնեմ որ շա-

տերը կատարուած իրողութիւն համարիլ եւ  
շուտով վաւերացնել տալ կուզեն : Ես դիտո-  
ղութիւններ ունիմ այն տեղեկագրին վրայ որ  
արդէն ներկայացած է հոս . աւելի լաւ կը  
համարիմ որ վաւերացումը ետ մնայ , քանզի  
աղեկ արդիւնք մը չպիտի ունենայ . եւ այս  
բաժան փաստերով պիտի կրնամ հաստատել :

Գանի մը ձայներ . — Իվելիձեան էֆ. սը-  
լսալ հասկցած է վերաքննութեան կէտը :

ԱՏԵՆԱՊՈՅՏ էՅ. — Պիտի բացատրեմ այդ  
կէտը . Վերաքննիչ Յանձնաժողովոյ բերած  
Մրագիրը դւռ վիճաբանելու է . վաւերացման  
համար առաջարկուածը Սահմանադրութեան  
այն մասերն են մըայն , զորս Ենդհանուք ժո-  
ղովն արդէն սրբազրած եւ դործադրութեան  
մէջ դրած է , եւ որպէս զի նորընափր Պատ-  
րիարքին ընելու երդմանը համար կնճիռ մը  
մնացած ՀԷԼլայ , շատերը փափաք կը յայտնեն  
որ անոնք Բ. Դռնէն վաւերացուին : Կերեւի թէ  
Խփէկճեան էֆ. այսպէս լաւ ըմբռնած չէր այս  
կէտը . ուստի այս բացատրութեամբ թող սիր-  
ար հանդարտ ՀԷԼլայ :

ԻՓէԿՃԵԱՆ Հ. Էֆ. — Թող' այդպէս ըլլայ.  
այդ սրբազրուած մասերուն գործադրութեան  
մինչեւ հիմա ոչ ոք արդելք եղած է, ի՞նչ  
հարկ կայ այսօր անոնց կառավարութեան կող-  
մէ վաւերացու մն ուղել . ոչ ապաքէն Տեղա-  
պահի եւ Քաղաքական ժողովոյ ընտրութիւն-  
ներ կատարուեցան, եւ սրբազրուած մասանց  
անվաւեր մնալն ոչ մի ինչ արդելք եղաւ նոյս  
ընտրութեանցը . հիմակուընէ անոնց վաւերա-  
ցումն ուղելը վ'րաքննութեան գործը խափա-  
նել է, ես այսպէս կը հաս'ընամ զայդ : Եթէ  
երեսիսանութիւնն այսպիսի դիտաւորութիւն  
մը ունի, կրնայ այդ խնդիրը քուէի դնել, և  
ամեն ոք ազատօրէն իւր քուէն տալով՝ մեծա-  
մասնութեան որոշումը յարդել : — Վերջապէս  
Պատրիարքական ընտրութեան խնդրոյն գալով,  
ասոր ստիպողականութիւնն զգալով հանգերձ  
պէտք է որ ինչպէս անցեալ նիստին մէջ ալ ը-  
սի, այսպիսի մեծ գործերու ձեռնարկելէ տ-  
ռաջ մենք զմեզ կանոնաւորութեան մէջ դնենք,  
նախընթաց նիստերու ատենազրութիւնքը վա-  
ւերացնելով, եւոյն . նոյն իսկ Բ. Դրան հրա-  
մանագրին մէջ՝ ինչպէս առկէց առաջ ալ ըստ  
եմ, չկայ այնպիսի ակնարկութիւն մը, որ ա-

մինչն հարկաւոր եղած բանը ետ ձգել տոյ եւ  
Պատրիարքական ընտրութիւնն յառաջ անցընէ .  
Նոյն հրամանագիրը զրոդներն ալ ինծի չափ կը  
հասկընան զայդ , անոր վրայ յենլով կըսեմ թէ  
տարակոյս չկայ որ Բ. Դուռն ալ կուղէ օրի-  
նաւորութեան մէջ կատարել Պատրիարքի ընտ-  
րութիւնը : Աւրեմն ինչո՞ւ ետ կը մնան ամենէն  
հարկաւոր եղած բաները , ինչո՞ւ միշտ կաշ-  
խատինք նախորդ ատենագրութեանց վաւերա-  
ցումը ետ ետ մզել . թերեւս ամենքս ալ յուղ-  
մամբ սրտի կը վախնանք նախորդ ատենագրու-  
թիւնները վաւերացնել : Սակայն եթէ երես-  
փոխանութիւնը կանոնաւորութեամբ պիտի  
վարուի , ինչպէս իւր պարտքն է , չկրնար ետ  
ձգել դայն՝ որ ամենէն հարկաւորն է : Որչափ  
ալ շատ համոզիչ փաստեր յառաջ բերուին  
Պատրիարքական ընտրութեան ստիպողական  
ըլլալուն մասին , չպիտի կրնամ տակաւին իմ  
քուէս անոր համար տալ : Միայն թէ երեսփո-  
խանական ժողովն եթէ այսօրուընէ չէղոք եւ  
ծանուցուած կուսակցութիւններէ դուրս ան-  
ձերէ քննիչ Յանձնաժողով մը դնէ եւ անոր  
յանձնէ երեսփոխանական ժողովոյ ներկայա-  
ցած բոլոր հանրագրոց եւ զանազան պաշտօ-  
նատարաց դէմ եղած ամբաստանութեանց քըն-  
նութիւնը , այն ատեն ես ալ կը մասնակցիմ  
քուէարկութեան Պատրիարքական ընտրութիւ-  
նը կատարուելու համար : Ուստի կառաջարկեմ  
որ քննիչ յանձնաժողով մը կաղմուի եւ անոր  
քննութեան արդիւնքը հրատարակուի 'ի գիտու-  
թիւն աղգին :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Իրբեւ երեսվոխան բացարձակապէս յայտնեցի Պատրիարքական ընտրութեան ստիպողական ըլլալը, այս մասին ձայնակիցներ ալ ունեցայ, բայց երբ ընդդիմարան է ֆէնտին վաւերացման առաջարկուած կէտերը թեթեւ կը նկատէ ևւ անոնց վաւերացման հարկաւորութիւնը կը ժխտէ, թող բարեհաճի Ընդհանուր ժողովոյ ատենագրութիւնները լաւ մը աչքէ անցնելու եւ պիտի տեսնէ թէ քանի քանի նիստեր առանց որոշում մը տալու ցրուած էն, մասն ոի մեծառոն մաս (74) էւ էւ է

Տ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎՐԴԻ. ԱՅԱԶՄԱԼԵԱՆ. — Խրատ է որ խնդրոյ մը մէջ ուրիշ խնդիր յարօւցանելը խնդիրը լուծել ըսել չէ։ Նախորդի նիստին մէջ Պատրիարքի ընտրութեան ստի-

պողականութեան խնդիրը՝ յարուցուեցաւ, ուրուն վրայ ընդերկար զինաբանուելէ ետև համազուեցանք թէ Ազգին շահը կը պահանջէ Պատրիարքական ընտրութիւնը կատարել անյապաղ, ուստի ինչորէս Առենապետ է՛մ. ալ յայտնեց, ես ալ համամիտ եմ այսօր Պատրիարքի ընտրութեան ստիպողականութեան մասին պէտք է քուէ արկութիւնը կատարուի. իսկ գալով Սահմանադրութեան արդէն ողբագրուած և գործադրութեան մէջ մտած մասերուն վաւերացման խնդրոյն, ըստ որում Վարչութիւնը կը վատահացնէ նոյն կէտերը վաւերացնել տալ Դրան, ուստի հարկ է որ Պատրիարքին ընտրութեան վաւերացմանը հետ անոնց վաւերացումն ալ բերէ : Այս է իմ կարծիքս :

ՄԵՐԵԿՄ—ԳՈՒԽԵԼԻ 8 . Էֆ . — Պատրիարքական ընտրութեան խնդիրը նախընթաց նիստէն հոս բերուած ատեն ետ ձգելու համար Երկու զանազան առարկութիւնը կային . մէկը կանոնաւորութեան մէջ մոցնել ժողովը և միւսը վերաբնութիւնն աւարտել . և ալ համամիտ էի այս առարկութեանց : Բայց այսօր իմ կարծիքս ալ փոխուեցաւ չէ թէ այն սղատմառաց համար որք Առենապետ էֆ . ի կողմէն մէջ բերուեցան , այլ այնպիսի պարագայից համար զորս յիշել հարկ չեմ համարիր Ատենապետ էֆ . մեզի հետ ընդերկար խօսելի ետեւ հոն եզրակացուց որ Պատրիարքի ընտրութեան նախադասութիւնն արուի և միւս խնդիրներն ետ թողուխն . սակայն վիճարանութեան հետեւանքէն այնպէս կը հասկնամթէ Պատրիս բքի ընարութեան յարակից եղաւ սրբագրուած կէտերուն Բ . Դռնէն վաւերացուիլը . չգիտեմ թէ ո՞ւսկէց ելաւ այդ կէտը՝ որ խնդիրն իր պարզութենէն կը հանէ և Պատրիարքի ընտրութիւնը հակասութեան մէջ կը ձգէ . զի մեր Սահմանադրութեան նշանակածուխոը հակասութիւն չվերցնէր . թզթին տեսրակին համար չէ , բնական բան մ'է որ եթէ Ընդհանուր ժողովը սրբագրած կէտերունի , հարկաւ Պատրիարքն անոնց համար ալ ուխտած կը լլայ . ինչու ուրեմն ասոր վրայ կը պնդեն . եթէ տակաւին պնդեն , ևս ալ խիէկճեան էֆ . ի ըստին պէս պիտի կասկածիմ թէ արդեօք վերաբնութեան խնդիրը

խամանելու համար՝ է, ըստ որում Առենա-  
պետ է Փ. բաւել թէ քանի մը տարւոյ կարօտ  
է այդ վերաքննութիւնը ձեռք բերել։ Ուստի  
այս կառկածներուն տեղի չտալու և Պատրի-  
արքի ընտրութիւնը նախադասելու համար ու-  
նեցած մեծամասնութիւննիս չկորսնցնելու  
նպատակաւ կըսեմ թէ առանց սրբագրուած  
կէտերը Պատրիարքի ընտրութեան հետ կա-  
պելու, սրբագրուած կէտերը գործադրենք,  
չսրբագրուածներն ալ սրբագրենք և ամբողջ  
վերաքննեալ սահմանադրութիւնը ներկայացր-  
նենք Դիտան։ Ուրիշ կէտեր ալ կան, զորս կը  
թուլում առայժմ։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Վարչութեան կողմէ  
այսօր բերուած թուղթին վայ բաւական զի-  
ճարանեցանք և ըստեցաւ որ քուէի դրուի։  
սակայն Մէրեէմ—Գուլի է Փ. ի խօսքն պէտք  
է պատասխանեմ։ որչափ որ նախընթաց նիս-  
տին մէջ առօրկուեցաւ թէ նախ վերաքննու-  
թիւն և ապա Պատրիարքի ընտրութիւն կա-  
տարուի, այն նիստին մէջ Վարչութիւնն ուխ-  
տի ձև մ'ալ բերած էր, որ անընդունելի  
դատուեցաւ։ Վարչութիւնը մտածելով այսօր  
կըսէ։ թէ որ այդ ալ արդելք մը համարուի և  
կը խստանայ արդէն սրբագրուած մասանց  
վաւերացման համար ։ Դիտան հետ բանակ-  
ցիլ։ ասկէց չհետեւիր թէ կրնայ շատ երկա-  
րիլ, կարելի է որ Վարչութիւնը մէկ շաբաթ-  
ուանն մէջ բերէ մեզի։

ՄԵՐԵԿՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՅ. — Թէ որ այդ  
սրբագրուած կէտերուն վաւերացմանն որու-  
շում տալ կուղէ ֆողովը, այն առեն պէտք է  
որ ժամանակ արուի երեսփոխանաց, որպէս  
զի վերջնական կերպով դիտողութիւննին ը-  
նեն. թերեւ այդ սրբագրութեանց եղած մի-  
ջոցին երեսփոխաններ կային՝ որ ընդհանուր  
վերաբննութեան վերապահեցին իրենց դիտո-  
ղութիւնը։ Ասկէց զատ գալիք Պատրիարքն  
իրաւունք ունի ըսել թէ ես փոփոխութեամբ  
հանդերձ չուխտեցի, անոր համար հիմակիվը  
նէ այս կէտն ալ ընտրութեան հետ կապելու  
հարկ չեմ տեսներ. քանի որ ընտրութեան  
ստիպողականութիւնն ընդունելու համար ար-  
դէն մեծամասնութիւն գոյացած կերեւի, ընտ-  
րութեան հետ չխառնենք միւսն ալ, որպէս  
զի զինաբանութիւն չբացուի, և ասով թերեւ  
ևս խնդիրը չառ երկարի։

ԱՂԱԲԵԿԵԱՆ Մ. Էֆ. — Մէկ տարիին կը  
մօտենայ որ Սահմանադրութեան խնդիրներով  
զբաղեցանք, ջանացինք որ Պատրիարքին Սահ-  
մանադրութիւն սովորեցնենք. իսկ այս միջո-  
ցին կուղանք հոն՝ թէ առանց Պատրիարքի  
կարելի չէ Սահմանադրութիւն քալել կամ ընդ-  
հակառակն առ անց Սահմանադրութեան Պատ-  
րիարք չքալեր : Երեսփոխանք մեծ մասամբ  
կռուեցան նախորդ Պատրիարքին հետ որ ա-  
ռանց Սահմանադրութեան կռուզէր քալել, և  
պահանջեցին իրմէ որ Սահմանադրութեամբ  
քալէ : Քաղաքական ժողովը պաշտօնի կոչուած  
օրէն լաւ գիտէր թէ Պատրիարք չկոյ, և կըր-  
նար առջի օրէն ըսել թէ առանց Պատրիարքի  
չեմ կրնար պաշտօն վարել . հիմա ձեռքերը  
ծոցը դրած չեմ կրնար կըսէ . այս ի՞նչովէս բան  
է : Մ/նչդեռ Սահմանադրութիւնը վերաբնու.  
թեան տակ է : Պատրիարքի ընտրութիւնն  
սահմողական է կըսենք, և առանց վերաքըն-  
ութեան աւարտման սպասելու ընտրել կռ-  
զենք . ենթադրելով թէ ընտրեցինք, այն ա-  
ռանց Պատրիարքի ի՞նչ ունենալու առաջ առաջ

Հաղցընենք որ քովէ . թէ որ անցած դրութեանց վրայ պիտի քալէ , միևնոյն տժգո՞ւռ . թիւնները պիտի երեան դան : Ակք կուզենք հասկանալ թէ Կրօնական և Քաղաքական ժողովներն ինչո՞ւ Պատրիարքի ընտրութիւն կուզեն , ի՞նչ ստիպողականութիւն կ'զգան , թող լուսաբանեն խնդիրը թէ առանց Պատրիարքի չեն կարող զործել այնպիսի մեծ սովի պողականութիւններ եթէ կան , Ընդհանուր

ժողովն ի՞նք պիտք է զգայ : Ես ալ գիտեմ որ  
առանց Ասհմանադրութեան կարող չէ Պատ-  
րիարքն Ազգը կառավարել . այսքան դարերէ  
՚ի վեր վեզօրաւորն է որ մեզ կառաջնորդէ .  
այս օրեւոս դարձեալ արքայութեան ճամբան

զմեղ բարեկարգենք , Ընդհանուր ժողովին վեհութիւնը սպահանելու համար ի՞նչ պէտք է և մեր նպատակն ի՞նչ է , ո՞ւր ալիսի երթանք , ասոնք քննենք : Մեր մեր յարգը կորսնցուցեր ենք , մեր վեհութիւնը շենք սպահաներ , աւելի լաւ է որ Ընդհանուր ժողովն իւր օրինաւոր կազմութեանը ստիպողականութիւն տայ , ինքզինքը կանոնաւորէ և իր սպատիւն ու վեհութիւնը սպահալանէ , քանի թէ Պատրիարքին փիլոնին տակը մանայ :

ԱԼԱՋԱՋԵԱՆ Հ. Էֆ. — Կուգեմ հասկրնալ  
թէ սրբագրուած կէտերուն վաւերացման գա-  
լուն պիտի սպասենք և ետքը պիտի ընտրենք  
Պատրիարքը . թէ որ սլիտի սպասենք ընտրու-  
թեան ստիպողականութիւնն ընդունած չենք  
ոլլար :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Սրբագրուած կէտե-  
րուն շատը ներքին կանոնաց կը վշրաբերին ,  
ինչպէս Փափաղեան էֆ. բիշ մ'առաջ բացատ-  
րեց . և նոնց մէջ ամենէն կարեորն Առեան  
բանալու և որոշում ընելու համար 71 թիւը  
շնայելով՝ ընտրեալ երեսփոխանաց մեծամաս-  
նութեան թիւը փնտռելու կէտն է : Խոկ թէ  
Պատրիարքի ընտրութեան համար սրբագրուած  
կէտերուն վտերացման դալուն պիտի սպաս-  
ուի թէ ոչ , այդ հարցման պատասխանը Վար-  
չութեան յայտագիրն է . Պատրիարքի ընտրու-  
թիւնը երբ որոշենք , Վարչութիւնը կը խօս-  
տանայ սրբագրուած կէտերուն համար Բ. Դը-  
րան հետ բանակցիլ . կը խնդրենք Քաղաքա-  
կան ժողովն , որ այս կէտը բացատրէ :

ՄԱԳՍՈՒՏԵԱՆ Ս . ՊէՏ . ( Առենապետ  
Քաղաքական ժողովը ) — Վարչութեան նպա-  
տակն այս է որ Աահմանադրութեան այն կէ-  
տերն՝ որոնք սրբագրուած են և գործադրու-  
թեան մէջ մտած , եթէ Ընդհանուր ժողովը  
իլլ յանձնէ Վարչութեան վաւերացնել տալ .  
Վարչութիւնն այսօրուընէ կընդունի այն պայ-  
մանու որ առանց անոնց վաւերացմանն սպա-  
սելու Պատրիարքի ընտրութիւնը կատարուի :

ԱԼԱՅԱՃԵԱՆ Հ. ԷՅ. — Ըստ է որ այսօր  
ընտրութիւնը պէտք է կատարել, որպէս զի  
Ամհմանադրութեան արդին սրբադրուած կէ-  
տերն ալ վաւերացման համար Բ. Դրան ներ-  
կայացուին :

Պէսեան թ. էֆ. — Երկու խնդիր ներ-  
կայացած է, մէկն ընարութիւն Պատրիարքի-  
և միւսը Սահմանադրութեան վերաբննութիւն։  
Մեք մտադիր էինք նախ վերաբննութիւնը կա-  
տարել և յետոյ Պատրիարքի ընարութիւնը։  
Ազգային Վարչութիւնն առարկեց թէ ընտ-  
րութիւնն ստիպողական է, և վերաբննութիւ-  
նը գուցէ շատ երկար տեսէ և թէ դժուար է  
Տեղապահով վարուիլ. վասն որոյ վերաբն-  
նութիւնն ընտրութենէն ետե մնայ։ Երեսփո-

խաններէն շատերն , ինչպէս եռ ալ , նկատե-  
լով որ Վարչութեան քերած տուաջարկութիւնն  
առիսողական է , սա՛ զոհողութիւնն ըրբնք թէ  
ըստ որում Պատրիարքի ընտրութիւնն ստիպո-  
ղական է , ըստ որում Սահմանադրութեան ինչ  
ինչ տրամադրութիւնք փոփոխուած Են Ընդ-  
հանուր ժողովոյ կողմէն առանց Բ. Դռնէն վա-  
ւերանալու , և ըստ որում գալիք Պատրիարքը  
Սահմանադրութեան վրայ ուխտէ նէ անկարելի  
պիտի բլույ Ընդհանուր ժողովոյ փոփոխած  
տրամադրութիւնները դործադրել առանց ան-  
հաւատարիմ մնալու տէրութեան , զի այն  
ուխտին ուժովը չպիտի կրնայ մաղիւ շափի չե-  
ղիլ Սահմանադրութենէն , այս հակասութենէն  
աղատելու համար փոփոխեալ տրամադրու-  
թեանց Բ. Դռնէն վաւերացման պէտքն առա-  
ջարկեցինք . . .

ԻՒԹԻՒԺԵԱՆ Կ. ԷՅ. Ճայնակցութեամբ  
ուրիշ քանի մը երեսվոխանաց . (Բաղաւելով Պէտ-  
կան էֆ. է ռէմ) — Ուրեմն մեք ալ տէրութեան  
անհաւատութիւն Ենք . չենք ընդունիր սյստիսի  
խօսքեր :

Առենապետ է Փ. կընդմիջէ առենարանը  
և յորդոր կընէ որ կընկը չխօսի :

Պէսեսն թ . էթ . — ( լուրուն-կէլք ) — Ես  
կրիւք չեմ խօսիր , այլ եռանդով . և այս ալ  
կարծեմ ներելի է . բաւտկան է որ անձնա-  
կանութեան և ժողովոյն դիւրաղդածութեան

վահմանադրութեան մէջ գծուած ուխտը կատարել կարելի չէ ըսի . գործադիրը Պատրիարքն է և կուխտէ Սահմանադրութեան անթերի գործադրութեանը համար : Խրիստեան Արքաղան Սահմանադրութեան ոգւոյն համեմատ վարուելու համար ուխտեց , որով կըցաւ ինքինքն արդարացնել թէ շմեզանչեց իր ուխտին դէմ : ( ԸՆԴՀԵԼՈՒՄՆԵՐ ) Բայց գալիք Պատրիարքին համար այնպիս չէ . նա սլիտի ուխտէ Սահմանադրութեան անթերի գործադրութեանը վրայ . ի՞նչպէս կարելի է այդպիսի ուխտ մը կատարել , մինչդեռ իր ուխտելիք սահմանադրութեան ինչ ինչ տրամադրութիւններն արդէն ընդհանուր ժողովը փոփոխած է առանց Բ . Դրան վաւերացմանը ներկայացնելու . և այս վաւերացումն անոր համար ուխտէն առաջ անհրաժեշտ է , որ

առորիարքը պիտի ուխտէ հաւատարիմ մնալ  
ուրածթեան , և հաւատարիմ մնալու համար  
կրնար է . Պրան վաւերացուցած օրէնքէն չե-  
ղիլ առանց անոր գիտութեանն ու հաւանու-  
թեանը :

ԱՏԵՆԱՊԵՏԻ Էֆ. — Սորապսն Հայր. առանի, բացման առենն ըստածո կուգայ կելնէ. աշջորդ նստին ինչ պիտի ընենք շպիտի կըրահիք որոշել. Մարիոս էֆ. աղեկ ըստու. մեքիւտանական բարեկարգութիւն չունինք տարաւուն, երեսփոխան մը մինչև երբ պիտի ոսպի յայտնի չ:

ԶԱՅՆԵՐ. — ԱՀ բաւական է վիճաբանուածիւնը, քուելի դրուի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Թէ որ ժողովը բաւական կը համարի մինչև հիմա եղած վիճականութիւնը, Պատրիարքի ընօրութեան ստիպուականութիւնը քուելի այստի դնեմ:

Պէսեան եւ օդսէն էֆ. — Ոչ ոչ Վար-  
չութեան լայտագիրն է ըռտէի դրուելիքը :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Վարչութեան յայտագիրը ոլան մը առաջ նորէն կարդացի . հասկանալի, չէր այն ըսուեցաւ : Քաղաքական ժողովը Առնենապետին հարցուցինք . նա ըստ որ սրբազրուած ինչ կէտեր որ կան՝ յանձնեցէք մեզի, Պատրիարքին ընտրութեան վաւերաց ման հետ անոնց ալ վաւերացումը թերենք :

Աւաձաձեան Հ. Էֆ. — Տակաւին չհաս  
կըցանք՝ ի՞նչ է այսօր որոշուածը. Պատրիարք  
ընտրութեան նախադասութեան խնդիրն է  
միայն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Տակաւին որոշուած չէ  
դեռ խօսք ուղղված էր կան, եթէ ֆողովը կուզ  
գիճաբանութիւնը շարունակել, պէտք է ո  
խօսին :

ԶԱՅՆԵՐ. — Ո՞չ ո՞չ . բաւական է :

ՈՒՐԻՇ ԶԱՅՆԵՐ. — Վարչութեան յայտն  
դիրն ամբողջ ըուէէ՛ր դրէք, զատել չըլլար :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ . — Հարցընող կայ դե  
ուր է ստիպողականութիւնը Պատրիարքի ընս  
րութեան . պատահխանեցի որ վիճարանու  
թիւնը դադրած է . ասոր դէմ ուրիշներ կե

նեն թէ յայտագիրը քուէի պիտի դրուի : առ պատասխանն ո՞վ տայ . ստիպողականութեան վրայ խնդիր պիտի ըլլայ նէ թող տուէք որ խօսին :

ԱՂԱԲԵԿԵԱՆ Մ . ԷՖ . — Մեզի ալ թողէք որ խօսինք :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — Ես ձեր իրաւունքը կը պաշտպանեմ արդէն :

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ . ԷՖ . — Երկու անդամ խօսք ուզեցի . իմ խօսքս ալ մէջ խաղաց :

ՄՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ . — Շատոնց ՚ի վեր պատիւ չունեցայ ներկայ գտնուիլ Ընդհանուր ժողովին . ցաւ է ինձ տեսնել որ փոխանակ կարծիքներն իրարու հետ բաղխելու , յորմէ ըյս պիտի ծագի , կիրքերն իրարու հետ կը բաղխին . յորմէ կադ և կոխւ կը ծնի : Եկեղեցւոյ և Աղդին շահերը խորհելու համար եկած էք հոս . կաղաչեմ կիրքերը մէկդի թողունք , մոռնանք անցեալ դէպքերը և աղդին ցաւերը բուժելու այսատինք :

Ա. ՄԵՆԱՊԵՏ ԷՓ . Նախ՝ ժողովին կամքն իմանալու համար թէ Վարչութեան յայտագրին վրայ եղած վիճարանութիւնը բաւական է թէ ո՛չ , քուէի կը դնէ , և 16 քուէի դէմ 26 քուէով վիճարանութեան դադարումը կը նույնուի :

Յետոյ Վարչութեան առաջարկութիւնը՝ թէ՝ Պատրիարքի ընտրութեան ստիպողականութեան և թէ՝ Սահմանադրութեան սրբագրուածած և ընդունուած կէտերուն վաւերացմանը մասին , քուէի կը դնէ , և 6 քուէի դէմ 26 քուէով կը նույնուի :

Այս միջոցին խառնաշփոթ ձայներ յառնելով նրեսիսաններէն ումանք քուէարկութեան արդիւնքն որոշակի չհասկընալնին յառաջ կը բերէն . ումանք ալ նախ՝ ընտրութեան ստիպողականութիւնը և ապա միւս կէտը զատ զատ քուէի զրուիլու կը պահանջեն :

Իփէկմեան և Աղաբէկման Մ . ԷՓէնտինը կը բողոքեն դիւանին դէմ ըսելով թէ իւր ըրած քուէարկութիւնքն ապօրինի են , և թէ այսպիսի ծանր խնդիրներ հասկմեալ քուէի շնն կրնար դրուիլ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — Իրաւունք չունիք բուքել :

ԻՓէԿՃԵԱՆ Հ . ԷՖ . — Այս , ունիմ . այսպէս հասկմեալ տագնապաւ տրուած որոշումներով է որ ժողովն իւր յարդը կը կորունցընէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — Բողոքինդ կարծանագրուի :

Իիւանը իմանալու համար թէ ժողովը երկու կէտերուն զատ զատ թէ սիամեղ քուէարկութիւնը կուզէ , նախ սց մասին քուէ կառաջարկէ , և մեծադոյն մասսամբ կորոշուի որ երկու կէտերն իրեւ յարակից մէկէն քուէի դրուին :

Իփէկմեան ԷՓ . կը դիտէ թէ Վարչութեան անդամներն իրաւունք չունին այս քուէարկութեան մասնակցելու :

Իիւանը կը պատասխանէ թէ Վարչութեան անդամոց քուէներն ՚ի համար չառնուեցան :

Յետոյ Իիւանը խմբագրելով քուէարկուելի ձեւը կը կարդայ և կը հարցնէ թէ դիտողութիւնը ընող կայ մի :

ԻՓէԿՃԵԱՆ ԵՒ ՀԱՎՈՒԵԱՆ ԷՓ . — Այդ ուրիշ բան չնշանակեր , բայց եթէ Սահմանադրութեան վերաբննութիւնը խափանել :

Ումանց առաջարկութեամբ վերանունեալ Բնտէւ Վերաբնելը բառերը յաւելցան :

ՍԹԻՄԱՐԱՃԵԱՆ Գ . ԷՓ . — Կերպէնորէ բառը չէ դործածած Վարչութիւնն իւր յայտագրին մէջ , այլ կը բանակցիմ Բ . Դրան հետ ըսած է : Այս կէտը թո'կ հարցուի Վարչութեան :

ՄԱԳՍՈՒՏԵԱՆ Ս. ՊէՅ . (Ա. ՄԵՆԱՊԵՏ Քաղաքական ժողովը) — Երաշխաւորութիւնը չընդունուիր , արդէն բացարեցի թէ Վարչութիւնը յանձն կառնու միայն սրբագրուած կէտերուն վաւերացմանը համար բանակցիլ Դրան հետ :

Այս բացարութեան վրայ Վերպէնորէ բառը վերցուելով էն խոստանաց բառը դրուեցաւ :

Ուրիշ դիտողութիւնը ընող չըլալով Դիւանը պէտք եղած սրբագրութիւնն ընելէ ե-

տեւ նորէն կարդաց քուէարկութեան դրուելով ձեւը , որ է այս :

« Երեսիսանական ժողովս նկատելով որ Վարչութիւնը կը խստանայ Ընդհանուր ժողովոյ մէջ Սահմանադրութեան ոգւոյն տրամադրան ըրած մէկ քանի ոտկաւաթիւ փոխութեանց Բ . Դոնէն վաւերացութեան Պատրիարքի ընտրութեան վաւերացման հետ ՚ի միասին ներկայացնել , որուշ նկատողութեան առնուլ Պատրիարքաւ կան ընտրութեան ստիպողականութեան համար Վարչութեան առաջարկութիւնը , եւ անոր զործադրութեանը ձեռնարկել : Սահմանադրութեան վերաբննութեան խնդիրը վերապահելով ։ »

ԻՓէԿՃԵԱՆ Հ . ԷՓ . — Բողոքեցի եւ դարձեալ կը բողոքեմ . այս կերպով քուէարկութիւն ՀԱՅՐ :

Ատեանը գոյուեցաւ ժամ 11 ին :

Ա. ԴՆ-ԴՆ-ԴՆ

Ա. ԴՆ-ԴՆ-ԴՆ

ՏԻԳՐԱՆ ԵՐԱՄՈՒՑԵԱՆ ՍԱՄԳԻՆ ԱՂԱԲԵԿԵԱՆ





## Գին 2 դրուշ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԴԱՅԻՆ ՄԱՏՈՒԿԻՆ

կը ճախուի ՚ի Դիւանասան Պատրիարքարանի, և կը գանուի  
ամեն գրավաճառաց քուլ և Եկեղեցեաց բանկայները .